




Lucy

615

2009

294

40957

89-41

250

Etiquette

Andersson

Решение

14917

29/24

615
un

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵԱՏՐԱԼԻ ՆԱԽԱՅԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵԱՏՐԱԼԻ ՆԱԽԱՅԵՐԻ
* ՄԱՐԿԱԿԱՆ ԴՈՒՐԵՐԻ
* ԴԵՍԿԱՆԻ ՄԱՐԿԱ
2294
JUN 2007

ԿԱՏԱԿ-ՎՈՂԵՎԻՆ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

1810
40957

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵԱՏՐԱԼԻ ՆԱԽԱՅԵՐԻ
* ՄԱՐԿԱԿԱՆ ԴՈՒՐԵՐԻ
* ԴԵՍԿԱՆԻ ՄԱՐԿԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵԱՏՐԱԼԻ ՆԱԽԱՅԵՐԻ
Ի ՎԵՆ ԳԶԵԳԷՈՎԻ

ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԴՈՒՐԵՐԻ

Настоящая пьеса, подъ названіемъ „ДОКТОРЪ ПРИНИМАЕТЪ“
соч. Івана Щеглова, передѣл. Адама Сардарянъ-Аревшатянца,
разрѣшена г. Главноначальствующимъ Гражд. частью на Кавказѣ,
къ представленію на сценахъ края.

2103

ԹԵԱՏՐԱԼԻ

ՏԳԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆՅԱՆԻ

Тизогр. Т. М. Ротиніанца на Гол. пр., д. № 41.


1900

Дозволено Цензурою. Тифлисъ, 26 Ноября 1899 г.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- 1) ԹԷՈԴՈՐՈՍ ՄԱՍՈՒՐԵԱՆՑ, նեարդալին և հոգեկան հիւանդութեանց բժշկապետ, 45 տարեկան:
- 2) ՎԱՍԻԼԻ ԶՈՒՐԱՅԻՉ ՇԱՐԲԱԹԵԱՆՑ, ակցիզնի չխով-նիկ (ստալճանաւոր, Երրեմն ուսուցիչ բնական-դիտութեան), 43 տարեկան:
- 3) ՕՐ. ՎԱՐՍԵՆԻԿ ՆԱԶԻԿԵԱՆ, 18 տարեկան:
- 4) ՍՈՖԻԱ ՍԱՅԹԱՔԵԱՆ, որբալրի, 35 տարեկան:
- 5) ԳԵՐԱՍԻՄ ԱՐՇԵՆԵԱՆ, զերձակ, 45 տարեկան:
- 6) ԵՐՈՒԱՆԴ ԴՈՒԴՈՒԿՅԱՆ, հոգեկան հիւանդ, 30 տ.
- 7) ԹԱԹՈՍ, Մամուրեանի ծառան, 30 տարեկան:
- 8) ՄԱԳԴԱՆ, Մամուրեանի աղախինը, 25 տարեկան:

Անցքը պատահում է Մամուրեանի առանձ-նասենեակում:



24614

615-2009

ՏԵՍԱՐԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տեսարանը ներկայացնում է բժշկի Մամուրեանի առանձնատնեակը: Դիմացը մուտքի դուռ՝ որ տանում է դէպի դահլիճը: Հանդիսականներից աջ կողմը կողմնակի դուռ դէպի նախասենեակը: Ձախ՝ երկու պատուհան, որոնց արանքներում գրասեղան իւր պարագայքով: Իսկ աջ՝ գահաւորակ: Միջին դռան աջ կողմը մի ցած կամուրջ, որի վերայ դեղօրայքի շէնք և բժշկութեան վերաբերեալ գործիքներ և զանազան պրոֆէսսորների կիսարձաններ: Աջ կողմը գրքերի պահարան և լուսացարան. պահարանի գլխին զանազան թուղանների խրտուիչակներ: Անկիւնում մի մարդկային կմախք. իսկ պատերին բնագիտական քարտեզներ: Գահաւորակի մօտ մի մարմարեայ սեղանիկ, վրան սողալով մի սիֆոն, արկղիկներ և հայելի: Բեմի մէջ տեղը՝ դէպի նախաբեմը կրկին մի կլոր սեղան, երկու կողքին աթոռներ, մէկը հիւանդի համար՝ միւսը բժշկի: Յերեկ է:

ՏԵՍԻՒ 1

ԹԱԹՈՍ (միայնակ):

ԹԱԹՈՍ: (Մաքրում է բժշկի քամկոնակը): Ձեր արևը դրուստ որ քամբաղտութիւն է ծառայել էսպէս գիտնական բժշկի մօտ. թքել եմ նրա գիտութեանը. մի նայեցէք սրա սերթուկին, ի սէր Աստուծոյ, ամբողջապէս եղի ու հրաքուի մէջ է թաթախուած: (Բարձրացնելով քիւլիկի մի ծայրից): Ըհը, տեսէք, բոլորը ցետումը շաղախած, ծալբելը մաշուած, հիմի սրանից հասկացէք կօշիկների հալը: Զարմանում եմ ճշմարիտ, մի մարդ՝ էգբան կարողութիւն ունենայ ու մի ձի էլ չ'պահէ, ախար էսքան էլ ժլատութիւն: (Մաքրելով սենեակը եւ կարգի բերելով զրաւեղանը): Ե՛հ, էլ մնալու սիրտ չունիմ, թէ որ մի բան կայ էս տանը ուրախանալու, էտ էլ մեր քոծն է: Նա որ չը լինի է, հաւատացէք մի սահաթ չեմ մնայ: Զշմարիտ, լու աղջիկ է, սիրտս խիստ է կպել. էսքան տարուայ ծառայ եմ, էսպէս ուրախ ու էշխով աղջիկ չեմ տեսել: Մառալ է, մառալ: Թշերը հօ կասեմաս Ախալցխի խնձոր ըլի:

ՏԵՍԻՆ 2

ԹԱԹՈՍ, ՄԱԳԴԱՆ

ՄԱԳԴԱՆ: (Մտնում է աջ դռնից անելը ձեռքին): Հը՛, Թաթոս, քնչ ես անում:

ԹԱԹՈՍ: Օ՛հ, Մագդան ջան, եկա՛ր հոգիս. քնչ եղաւ մեր բայդուշը, գնաց:

ՄԱԳԴԱՆ: Գնաց, կորաւ:

ԹԱԹՈՍ: Փիւհ, էն քինթն ու պոռնգը որ տեսնում եմ է, աղբաթս խառնվում է: Մարդ իմանայ քնչ բան ունի Կօջորում: *)

ՄԱԳԴԱՆ: Ո՛վ գիդէ, աղջիկ պարոնը կանչել էր:

ԹԱԹՈՍ: Զհանդամը նրանց գլուխը: Դուռն ինձ ասա՛, մարալ ջան, մենք երբ ենք պսակվում, երբ: (Ուզում է փաղաքշել եւ գրկել, ըայց Մագդանը մնրժում է): Հը՛, քնչ ես փախչում, տօ սարի էժ, մի վախենար, չեմ ուտիլ: (Լնզուն հանելով եւ ծաղրելով) Ըը՛ր... (Յանկարծ յարձակուելով) Վայ ուտեմ ես քո պաճօ քինթը:

ՄԱԳԴԱՆ: Ա՛յ հողեմ գլուխդ ու գուռնայ քիթդ, հը՛:

ԹԱԹՈՍ: Լաւ, ասա՛, տօ հուջաթ, ախար երբ ենք պսակվում է:

ՄԱԳԴԱՆ: Ե՛յ, խելօք, որտեղ են փողերը, որ հէնց մի գլուխ «պսակ, պսակ» ես կանչում:

ԹԱԹՈՍ: Ե՛հ, բան չունիս. փողերը... Ասենք մի մեծ բան էլ չի, մի հարիւրանոց ու քու ջանը, պրծաւ գնաց:

ՄԱԳԴԱՆ: Հա՛, հեշտ է աշել «հարիւրանոց», էն էլ էսպէս բժշկի մօտ: Անիրաւը ասա թողնում է որ հիւանդներին մի «նա չայ» էլ է ուղիքը:

ԹԱԹՈՍ: Դու արխային կաց, ինչոր ջանումս ջան կայ ու գլխումս դուդ կայ, պէտք է բանեցնեմ: Քո արեւը, Մագդան ջան, զարթուն թէ քնած տեղս մէ գլուխ դրա վրայ եմ մաածում: Քեզ էգպէս եմ սիրում, տօ սիկլօկօ: Ա՛յ կ'տեսնես թէ ինչ ուսուցիւն եմ բանեցնում:

ՄԱԳԴԱՆ: Օ՛, եդ աչքերը որ տեսնում եմ, ամէն բան քեզնից սպոսելու է, ով քեզ չի ճանաչում...

ԹԱԹՈՍ: Զէ, չէ, Մագդան ջան, անմեղ ես կասկածում, մի՛ վախենար, խօսքս խօսք է. եթէ չ'հասնենք մեր մուրաղին՝ թքի՛ր դու էլ իմ երեսին: Տօ գիժ, քնչ ես վախում, ամէն բան ձեռքիցս կը գայ: Լսիր, քեզ մի բան ասեմ. հեր ու Արմաւիրում մի ամսի չափ պարապ մնացի, գիտես ինչ արի:

ՄԱԳԴԱՆ: Ես քնչ գիտեմ, յիմար, էսպէս ես հարցնում, կարծես կողքիդ լինէի:

*) Թիֆլիսից 19 վերստ հեռու աւան է:

ԹԱԹՈՍ: Գերասան դարձայ, քո ազնիւ արեւը.
կօշկակարի դեր կատարեցի:

ՄԱԳԴԱՆ: Վայ քեզ չ'թաղեմ, Թաթոս, զօրթ
ես ասում: Վ

ԹԱԹՈՍ: Աստուած վկայ և էնպէս լաւ բան
է եղել գերասանութիւնը, որ նրանց մէջ մեռնեմ էլ,
դարդ չունիմ. սօ, գերասանները օր կան երկնքի թըռ-
չուններ են, թռչուններ: Հո՛, կօշկակար խաղալը
դեռ ոչինչ, մի օր էլ Ֆրանցուզի թագաւոր շինեցին:

ՄԱԳԴԱՆ: Վայ դու գեղիներ չ'մտնես, Թաթոս,
մէկ տեսել էի՝ ոչինչ չէի ուզել: (Ժիծաղելով): Օհ,
դու մատաւարա, մայմուն: Արի ու մի ծիծաղիր,
Թաթոս ու Ֆրանցուզի թագաւոր, հո՛, հո՛, հո՛:

ԹԱԹՈՍ: Դու ծիծաղիր, ծիծաղիր, մի տե-
սել էիր թէ ամէնքը հնց էին գովում. ասում էին
պու վերջը լաւ կօմիկ կ'լինես: Սպասիր, տես մի
օր քնչ խաղ եմ հնարում: (Նախասննակում
լսվում է զանգի ծայն):

ՄԱԳԴԱՆ: Ա՛հ, կարծեմ մեր զանգն էր: (Ուղ-
ղունքով հայելիի մէջ): Դէհ, արի ու սրանց մէկ
մէկ հասկացրու որ բժիշկը չէ ընդունում:

ԹԱԹՈՍ: (Որ մտածում էր, յանկարծ մի
միտք է յղանում): Սպասիր, սպասիր, դու չ'ասես
թէ բժիշկը չէ ընդունում:

ՄԱԳԴԱՆ: Տօ ցանցառ, բաս քնչ ասեմ:

ԹԱԹՈՍ: (Արագութեամբ հանում է իւր ա-
մառային պիղջակը եւ հազնում է բժշկի նրկար-
սիւթիւնը, քթին դնում է ոսկեայ պէնսնէն, ծա-
կատը քորելով՝ արտասանում է հանդիսատի): Այ
ինչ, ասո՛ւ «բժիշկը ընդունում է»: Վ

ՄԱԳԴԱՆ: Ի՛նչ ես անում, խելագար, լաւ
մտածիր, տես, որ գլխներիս փորձանք չ'բերես:
(Աւելի ուժեղ զանգի ծայն): Տէր Աստուած, նորից
զանգի ձայն, ես վախենում եմ:

ԹԱԹՈՍ: Տօ, խէպօ, քնչ ես վախենում, ընդ-
հակառակը ուրախացիր, հոգիս, այդ քո բաժինքի
փողերն են որ ծնգծնգալով գալիս են:

ՄԱԳԴԱՆ: Դու էգալէս ասո՛ւ, տես որ ծընգ-
ծընգալով ու կնծիւ էլ տալով մեզ բերդը տանեն:

ԹԱԹՈՍ: Է՛, վախկոտ, գնա՛ շուտ, բաց դուռը:
(Արագ): Բայց սպասիր, սպասիր, տես, մուղայիթ
ժաժ արի. եթէ եկողներից ծանօթ հիւանդներ
լինին, առանց սպասեցնելու դէմուդէմը կ'ասես թէ՛
բժիշկը բաղնիք գնաց, իսկ եթէ նոր մաքրիք են,
այսինքն թաղա ձկներ, քաղաքավարի համեցէք
արա՛. ոչխարներին ուղղակի ետխիցը բռնած ներս
բաշի՛ր:

ՄԱԳԴԱՆ: Դուն խտակ խելքիցը. կ'հանես,
անառակ... ինքս էլ չ'գիտեմ թէ քնչ է լինելու:
(Դուրս է գնում աջ կողմը):

ՏԵՍԻՆ 3

ԹԱԹՈՍ (միայնակ):

ԹԱԹՈՍ: Իսկ ես կարծում եմ, որ ոչինչ էլ չի լինի, բացի խեղճ ու զազումը: Շատերը հենց իմանում են թե բժշկութիւնը մի մեծ բան է: Հարցնողն ու՛ է. իրան տուր սուտ ու մուտ մի գեղ, մի ներքինի ~~աւելի~~ ~~հրեայ~~, իրիմար ~~արարար~~, պըր-
ծաւ գնաց: Շատ դարդս է թե հօրս կուշտը կերթայ, ուրիշները գիւժին գիւժին են ճանփու գնում, մեծ բան է մի երկուսին էլ ես զրկեմ ի վե-
րին Երուսաղէմ: (Շրջում է այս եւ այն կողմ, դիտում է առարկաները): Օ՛հ, էս ինչ նաշխուն զութիւք են... վա՛հ, կանֆետներ են: (Երկու հատ քերանն է ձգում): Իւֆ, լազաթ, մէջը ոտմ էր, մեր տղայ, աւտաս էս էն րիժա մաթուշկի համար է պահել. տեսնում էք մեր քաւթաւին: Ինչ որ է, սրանք էլ պէտք կգան, հենց ոչինչ էլ որ չլինի է, Մագդանի փորը ցաւի թէ չէ, թաք թաք նրան կտամ: Թարսի պէս էս տարի էնքան խիար են բե-
րել, որ ում փորն ասես չի ցաւի, բաս ինչ գտա-
րումար կ'լինի. թող հօրէսի գէնը սրանք փորա-
ցաւի գեղ լինին, ուրեմն՝ ~~օլում~~ ~~բեցին~~: (Արկղիկը դնում է զրպանում եւ հանում է բոված սիսեռ): Վա՛հ, էս ինչքան լաբլաբու եմ ունեցել, տօ՛, արի

սրանք էլ հաբեր ընեն, հը... (Նայելով հայելիում, փողպատն ուղղում է) ~~է՛հ, անպիտան, մանածակ~~
~~գտաւ ու կոխեալ էլ հիմի պոկեց: Նրոնում է,~~
գոնում է եւ զրպանը դնում, յետոյ քաակը հանե-
լով՝ նախ համարում է, վերջը թքում վրան): Թֆու, թֆու, թֆու. դէ՛հ, քեզ տեսնեմ, արա
պորտման ջան, աշխատիր մի լաւ փքուես ու աը-
գուես, իմ սիրուն Մագդանի սիրտն էլ հովցնես:
(Դնում է աջ զրպանը, տեսնելով Մագդանին) Հը՛,
ով կայ:

ՏԵՍԻՆ 4

ԹԱԹՈՍ, ՄԱԳԴԱՆ

ՄԱԳԴԱՆ: Մի այծի միրուքով մարդ է, եր-
~~կուհի~~ էլ կիսադք, մէկը բոլորովին չոր ու ցա-
մաք, իսկ միւսը ուռած ու փքուած: (Նախանձոտ):
Դու էլ, տես անզգամ, էտ կանանց հետ խելօք
կաց թէ չէ աչքերդ կը հանեմ: (Ուզում է ժառը
աչքը կոխել):

ԹԱԹՈՍ: Հը՛, հը՛, հը՛... սարսաղութիւն
չանես:

ՄԱԳԴԱՆ. Աւելորդ խօսքեր չ'ծախսես թէ չէ
էլ չես պըծնի ինձանից. ես լաւ գիտեմ ինչ պտուղ
էլ որ ես:

ԹԱԹՈՍ: Ի՞նչ ես ասում, Մագդան ջան, ուր

ես հոգիդ կրակ գցում. էլ գիտ, ես իմ տգուհա-
կին, իմ սիկլօկօկօին մթթէ կարող եմ գաւաճանել:
Պէ՛հ թող, խօսելու ժամանակ չէ, հիմի ես բժիշկ
եմ՝ դօկտոր Թաթու. թող մի քիչ սուրիողնանամ,
պէտք է գլուխս ճանր պահեմ, փելիստփայլ նման
խօսեմ: Տես ինչ խրթին գրաբար եմ խօսելու:

ՄԱԳԻԱՆ: Քո գլխի արեւը, շատ բան որ դու
գիտես:

ԹԱԹՈՍ: Փառք Աստուծոյ, երեք դօքտոր եմ
փոխել. ամօթ էլ կ'լինի ինձ համար, որ դեղեր
տալ էլ չգիտենամ. երկու տարի Նախճուկուխի
հիւանդանոցի պահապան եմ եղել. մի դեղերի
անուններ գիտեմ որ շշկուած մնամ: Սկսեմ ըն-
դիմ, չիմար որորորին, բարեհա, իպէպէտանա, չաբո-
ւեմ հապրոսս, ուրիշ էլ ինչ ես սկզբում՝ չախօր-
որոմ, սաւթարիչում ընկի. էլի տուն մ' գալիս գին զու-
որոմ:

ՄԱԴԻՐԱՆ: Այ գլուխդ մեռնի, չը՛, աստ ֆեր-
շալ էս, էլի:

ԹԱԹՈՍ: Ի՞նչ ֆերշալ, ի՞նչ դալլաք—դօխ-
տուր Թաթոս, էյ, սաբոադ: Դէհ, հեռացիր, հե-
ռացիր գլխիցս որ պէտք է հիւանդներին ընդունեմ:

ՄԱԳԴԱՆ: (Դնում է եւ անմիջապէս վերադառնում): Թաթոս ջան, հոգիս, զգոյշ կաց բեզմատագ, չ'սարսաղանաս ու աղէկացիս բան չ'անես:

ԹԱԹՈՍ: ԵՔՀ, ռադ ըլի գլխիցս, է սէր Սա-
տուծոյ, դուն ինձ բան մի սովորեցրու, իմ գիտե-
ցածն էլ ինձ հերիք է:

ՄԱԻԴԱՆ: (Զանչ անելով): Ը՛հ, մայմուն,
մասխարա: (Դուրս է գնում՝ դեպի նախասենյակը):

8651 5

ԹԱԹՈՍ (միայնակ):

ԹԱԹՈՍ: Այժմ տեսնենք ամէն բան կարգէն
է թէ ոչ: (Արագուլթեամբ կարգի է քերում բժշ-
կական առարկաները, յետոյ ուղղվում է հայելու
մէջ): Ոչինչ, բաւականին խորհրդաւոր պատկեր
ունիմ: (Պէնսնէն ուղղելով եւ փրթկալով) Հա, հա,
հա, մէկ քթիս նայեցէք. 'ի սէր Աստուծոյ, հէնց
գիտենաս քթոց բլի. բայց արի տես որ սաղում է:
Վահ, վահ, վահ, քնչ հիանալի ճակատէ է, իսկ եւ
իսկ վարդապետական ճակատ: (Ձեռքերը տրորելով
շրջում է եւ յանկարծ տեսնելով սեղանի վերայ
ուտելիք): Յհօ, էս լաւ է, բժիշկս իրիգուն բան չի
կերել. էհ ուրեմն ես կուտեմ որ մի փոքր ոյժ
առնեմ, եռանդս աւելանալ: (Արագուլթեամբ ու-
տում է եւ շուտ շուտ օղի խմում): Դէհ, Թաթոս
Մինայիչ, քեզ տեսնեմ: Այս քո կենացը, հոգիս,
(Կոնծում է): Աստուած քեզ յաջողութիւն տայ ու
բօլ բօլ էլ փողեր: (Նորից խմում է): Ե՛հ, ոչինչ,

վնաս չկայ, էսօր հինգշաբթի է, փառք Աստուծոյ, օրը բարի է, լուսնի էլ 25-ը: Ո՛վ գիտէ, կարելի է իմ բաղդից սարսաղների թիւը շատ լինի. (Կոնծում է երրորդը քաժակը. ժամացոյցը տասն է խփում) Ուխայ, ինչ իր ժամանակին հովացրի սիրտս, Է... (Յորից ուղղուելով, հազալով, խորհրդաւոր դիրք ընկելով, քաց է անում միջին դուռը): Պարոնայք, համեցէք, ու՛մ հերթն է:

ՏԵՍԻՆ 6

ԹԱԹՈՍ, ԲԱՐՍԵՂ

ԹԱԹՈՍ: Ո՛ւմ հետ պատիւ ունիմ խօսելու: ԲԱՐՍԵՂ: Վասիլի Զուրաբիչ Շարբաթեանց, քրքիզնի չինովնիկ, երբեմն մանկավարժ, գաստուու աշխարհագրութեան և բնական գիտութեանց շերամապահական և այգեգործական դպրոցներում. եղել եմ վերակացու խուլ և կոյր աղջկերանց դպրոցներում:

ԹԱԹՈՍ: Ա՛, ուրախ եմ, ուրախ: Ուրեմն կոյր դպրոցներում. շատ բարի, գեղեցիկ: Նստեցէք խնդրեմ: (Նստում են): Ի՛նչով կարող եմ օգտակար գտանիլ:

ԲԱՐՍԵՂ: Ամէն բանով, զօքտոր, ամէն բանով: Տեսէք թէ ինչ, պարոն բժշկապետ, ինձ վրձնողական թվում է որ վերջին օրերս ես տանջվում եմ գլխացոցով:

ԹԱԹՈՍ: (Զարմացած՝ Բարսեղին): Ի՛նչ, ի՛նչ, ի՛նչպէս ասացիք:

ԲԱՐՍԵՂ: Դիպուկա:

ԹԱԹՈՍ: (Լուրջ): Նեղութիւն կրեցէք բացատրել զմանրամասն, այսինքն...

ԲԱՐՍԵՂ: (Քիչ շփոթուած): Այսինքն... տեսնում եմ բոլորովին ո՛չ այն՝ ինչ որ խկապէս գոլութիւն ունի կեանքի մէջ:

ԹԱԹՈՍ: Ա՛... այսինքն տեսնում էք այն՝ ինչոր չկայ աշխարհումը—հասկացայ, հասկացայ: Դիտէք, պարոն Շարբաթեանց, այժմ զհիւանդութիւնն այն սաստիկ տարածեալ է մարդաց մէջ, (ուղղուելով) մանաւանդ ի՛մէջ վարժապետաց և վարդապետաց: Իսկապէս ի՛նչպէս է այդ բանը երեւում ձեզ:

ԲԱՐՍԵՂ: Միշտ այլակերպ: Ա՛յ, օրինակի համար այժմ—թէեւ նայում եմ ձեզ վերայ, բայց ինձ թվում է որ—դուք բոլորովին այն չէք, ինչ որ պիտի լինիք:

ԹԱԹՈՍ: (Շփոթուած եւ նրկիւղով): Բայց և այնպէս պարզեցէք... այսինքն... ի՛նչ է թվում ձեզ: (Կողմը): Այլակերպը դու ես, հայկանի գլուխ:

ԲԱՐՍԵՂ: Շատ կարելի է ձեզ տարօրինակ երեւայ... այժմ ինձ թվում է որ դուք... (Կակազելով): Ի՛ստմէ... ի... օն էք:

ԹԱԹՈՍ: Ե՞ս խամ միլ... լիօն:

ԲԱՐՍԵՂ: Այսինքն, ուրիշ կերպ ասած ձեր ֆիզիոնոմիան՝ դիմագլուխները ինձ լիշեցնում է խամէլիօն: Տեսէք ինչ, որովհետեւ ես երբեմն եղել եմ բնագիտութեան ուսուցիչ... կարծես միշտ երազումս լինիմ ե այդ պատճառաւ էլ բոլոր առարկաները ինձ գազաններ են երևում:

ԹԱԹՈՍ: (Որ նստած էր կնճոռոտ, կասկածը փարատում է. քիչ լուռ լինից յետոյ): Առ հասարակ յորձում ժամանակի իցէք այդ դրութեան:

ԲԱՐՍԵՂ: Իսկապէս կէս օրին, գիշերը չեմ տեսնում իմ առաջ որ եւ է այլանդակութիւն:

ԹԱԹՈՍ: Յետ կոճկեցէք զբաճկոնակն ձեր և երկու անգամ կուշտ կուշտ շունչ քաշեցէք: (Բարսեղը կատարում է. Թաթոսը մուրճով մի քանի տեղ պինդ պինդ զարկում է եւ ահանջ դնում): Ներեցէք իմ անհամեստ հարցմունքին... դուք իսկապէս սիրում էք զուարճանալ... այսպէս ասած մի փոքր... (Կոնծելու նշան է անում):

ԲԱՐՍԵՂ: (Երէւ-հաբը հոգորին խփելով): Այսինքն... այստեղ:

ԹԱԹՈՍ: Այո, հէնց այդտեղ: (Ուրախ մօտ է քերում օղիի շիշը):

ԲԱՐՍԵՂ: (Անհամարձակ): Ինչպէս ձեզ ասեմ... այսինքն... երբ ես չեմ տեսնում շիշը, այն ժա-

մանակ համարեայ թէ... (Եւ թ խէթ նայում է շիշին):

ԹԱԹՈՍ: (Մտնելու արար): Իսկ երբ տեսնում էք:

ԲԱՐՍԵՂ: (Ետորը հառաչանք արձակելով): Ըհ... երբ իսկապէս ծարաւից պապագում եմ... այն ժամանակ...ը...ը...

ԹԱԹՈՍ: Այ, տես որ իզուր, շատ իզուր. ծարաւը միշտ պէտք է կոտրել, մանաւանդ կէս օրին: (Բերում է սկոտողի վերայ դարսած ուտելիքը, գինու, օղիի քաժակներ եւ դնում Բարսեղի առաջ): Համեցէք խնդրեմ:

ԲԱՐՍԵՂ: Այդ քնչ էք հրամայում, դօքտոր, ճշմարիտ՝ ես ամաչում եմ... այսինքն... ուզում եմ ասել, եթէ դուք ևս... պարոն բժշկապետ, կ'ընկերակցէք ինձ հետ...

ԹԱԹՈՍ: Եւ ինչու չէ, կ'ընկերանամ: (Բաժակին զարկելով խմում են):


ԲԱՐՍԵՂ: Չարմանում եմ, ճշմարիտ, թէ ինչպէս առաջին հայեացքից նախագուշակեցիք թէ բանն ինչումն է:

ԹԱԹՈՍ: Հըմ... եթէ ինչպէս պրօֆեսսորը չ'հասկանայ, բաս ո՞վ հասկանայցէ:

ԲԱՐՍԵՂ: (Անվստահ): Թո՛ղ կ'տաք երկրորդել:

ԹԱԹՈՍ: Ինչու չէ, խնդրեմ. ոչ թէ երկրորդել, ուզում էք երրորդն էլ ու չորրորդն էլ օր-

1002
565



նից վնաս չի գայ երբէք: Սուտ է, բարեկամ, որ բժիշկները կ'արգելեն ասելով՝ թէ՛ «մաստիսը իցէ», նոքա ոչ գիտեն զբաղադրութիւնն սորա օգտակար:

ԲԱՐՍԵՂ: (Ազահաբար խմում է իրարու յետեւից երեք ըստակ օղի): Ի՞նչպէս բացատրել ձեր այս սրտալի ընդունելութիւնը:

ԹԱԹՈՍ: Ո՛ւզում էք ճիշտն իմանալ... այդ բժշկական ամենահասարակ ընդունելութիւնն իցէ. երբ հիւանդը կատարեալ կը խմէ, յայնժամ անկեղծ դառնայցէ. բայց բժշկին ո՞րն աւելի կարևոր իցէ եթէ ոչ զանկեղծութիւնն:

ԲԱՐՍԵՂ: Երբ բանը անկեղծութեան է հասնում, պէտք է ձեզ յայտնեմ, պարոն բժշկապետ, թէ ձեր օղին հրաշալի է և վարպետութեամբ է պատրաստուած: Եթէ կարելի է մի բաժակ ևս... (Նորից խմում է, հետզհետէ նկատելի է լինում արընցումիւնը): Ա՛յ, ես սորան կասեմ բժիշկ. հոգի է հոգի և ոչ թէ բժիշկ: (Բարձրաձայն նրգելով օպերայի եղանակով): Հիւանդ էի, հիւանդ էի, բնկած մահճում տրտմութեան...

ԹԱԹՈՍ: (Անմիջապէս ձեռքով ծածկում է Բարսեղի ընթանը եւ ցոյց տալով միջին դուռը): Կամաց երգեցէք, այնտեղ հիւանդներ կան:

ԲԱՐՍԵՂ: Սփսսո որ հիւանդներ կան և խանգարում են... օհ... (Զարկում է թաթոսի ուսին

եւ յետոյ վզին փափաթում): Ի՞նչ լաւ ժամանակ կ'անցկացնէինք... տփսոս, տփսոս... Ի՞նչ և այնպէս, սիրելի բժիշկ, ինձ մի խորհուրդ տուէք:

ԹԱԹՈՍ: Ահա իմ խորհուրդը: Այս ասուները որ անցնին, ձեռք քաշեցէք արողից և փորձեցէք ռոմբ. իսկ քնելուց առաջ ձեր գլխին մի բուռը ծովի աղ ցանեցէք:

ԲԱՐՍԵՂ: Շատ և շատ շնորհակալ եմ... (Վերկենալով): Օ՛հ... Գլուխս մի փոքր պտտում է... (Ժիծաղելով): Հը՛հ... կարծես հարբած լինիմ: Գուք, բժիշկ, այնպէս բարձրացրիք իմ հոգեկան տրամադրութիւնը, այնպէս բարձրացրիք... որ ոչ մի նիւթականը չի վարձատրիլ ձեր այդ մարդասէր վարմունքը... (Դժուարութեամբ հանում է գրպանից քրակը եւ ուղղակի տալիս է թաթոսին): Ահաւասիկ, երբ այդպէս է, խնդրեմ, ինքներդ ձեր ձեռքով, ինչ որ արժանի է, վերցրէք. մինչդեռ ձեր թոյլտուութեամբ կ'համարձակուեմ մի փոքր էլ... (Շարունակում է ուսել խմելը):

ԹԱԹՈՍ: Համեցէք, համեցէք: (Որոնելով փողերը, միջից հանում է մի տասը աւուրլիանոց): Սատանան տանէ, ճշմարիտ տեղն է որ թուանոցը սլլացնեմ, բոլորը մէկ է, պէտք է բնասարաններում փչացնէ, աւելի լաւ չէ՛ ծոցիս մօտ տաքանայ. չեմ էլ կարծում թէ համբարէ: (Վերց-

նում է փողը եւ քսակը վերադարձնում): Շատ և շատ շնորհակալ եմ:

ԲԱՐՍԵՆ: (Վերկենալով՝ գլխարկն է որոնում, Թաթոսը արագութեամբ գտնում է եւ տալիս է Զարսեղին): Իսկ ես՝ ինչպէս շնորհակալ եմ, ո՛հ ինչպէս... միմիայն պէտք է խոստովանել որ մոռացել եմ մոռաքը... մի փոքր գլուխս այնպէս...

ԹԱԹՈՍ: Ոչինչ, ոչինչ, թո՛ղ այսօր վասն ձեր բացառութիւն եղիցի: (Զանգահարում է ղէպի կողմնակի դուռը): Մագդան, այս պարոնին զգուշութեամբ ճանապարհ դիր խոհանոցի դռնով: Յտեսութիւն, ագնիւ աստիճանաւոր:

ԲԱՐՍԵՆ: (Վազնգալով): Յտեսութիւն... Հոգի է հոգի, Աստուած վկայ, ալ քեզ բժիշկ: (Ժամածոնլով ըստ ճրարածայն նրզում է): «Բայց դու, բժիշկ, ինձ տուեցիր այս բալտասն...»:

ԹԱԹՈՍ: (Որ առաջնորդում էր մինչեւ դուռը): Բեցեպտը չըկորցնէք, ագնիւ բարեկամ և զգուշացէք չձրսացնել զերեկամուսնս ձեր:

ՏԵՍԻՒ 7

ԹԱԹՈՍ (մենակ)

ԹԱԹՈՍ: (Տաս ոտըլիանոցը դնում է իւր գրպանը): Զէ, եղբայր, սֆթան շատ լաւն էր. թէ որ բանն էսպէս աջ գնաց ոչ թէ հարսա-

նիք, ալ ինչպէս տեսնում եմ կնուսքի համար էլ գեռ մի բան կը մնայ: (Լսվում է միջին դռան թեթեւ թրխկոցը եւ օրիորդ Վարսենիկ Նազիկեան մտնում ճայնը):

ՎԱՐՍԵՆԻԿ: (Դրսից): Կարելի է ներս գալ:

ԹԱԹՈՍ: (Ուղղվում է եւ շրթունքները սրբելով): Ոչ միայն կարելի է ալ և հարկաւոր է: (Բաց է անում միջին դուռը, մտնում է օր. Վարսենիկը ձեռքին ընդիկելով):

ՏԵՍԻՒ 8

ԹԱԹՈՍ, ՎԱՐՍԵՆԻԿ

ՎԱՐՍԵՆԻԿ: (Քնքոյշ և գողտրիկ ըստեղծ է): Բոն ժուր, միւսիս լը դօքտօր:

ԹԱԹՈՍ: (Շփոթուած՝ թաշկինակը ձեռքին): Բօ, բօ, բօն ժուր մաղմուազէլ:

ՎԱՐՍԵՆԻԿ: Փիւֆ... այս քնչ է, կարծես սոխի հոտ լինի կանգնած:

ԹԱԹՈՍ: Այն, մի աքցիգնի չինովնիկ էր ինձ մօտ, սոխպեցի հում սոխ ուտել, որովհետեւ բժշկութիւնը այդպէս էր պահանջում: Ներեցէք, օրիորդ, որ դուք... այսինքն...

ՎԱՐՍԵՆԻԿ: Ախ, ես չեմ կարող տանել սոխի հոտը, ես չեմ կարող... փիւֆ, փիւֆ... Ես ինձ վատ եմ զգում: (Ուզում է վայր ընկնել):

ԹԱԹՈՍ: (Թաթոսը ընկում է մէջքից եւ կրծքից ու զգուշութեամբ նստեցնում է ըազկաթոռի վրայ, ուշադրութեամբ զննում է կուրծքը, սիֆոնից մի ըստակ ջուր է լցնում եւ կամաց՝ ոտքի ծայրերի վրայ վազելով տալիս է Վարսենիկին, մեղմ): Արդեօք չէք կամենալ մի բաժակ հանքային ջուր, շատ օգտակար է... Սուլֆուրէ-հո-ճ դէպք:

ՎԱՐՍԵՆԻԿ: (Աչքերը փակած խմում է): Մերսի:

ԹԱԹՈՍ: Բայց ՚ի սէր Սատուծոյ, ներեցէք ինձ, ես չէի կարող երեւակայել որ դուք այնքան քնքոյշ էք:

ՎԱՐՍԵՆԻԿ: Ա՛խ, ես այնպէս քնքոյշ եմ, այնպէս քնքոյշ եմ, դօքտոր, որ եթէ օդի մէջ անախորժ հոտ եմ զգում, իսկոյն ուշաթափւում եմ. մինչեւ տնգամ եթէ փողոցում մի անվայել խօսք եմ լսում, անմիջապէս վատ եմ զգում ինձ: (Վերադարձնում է ըստակը): Մենք կանաչքս՝ իրաւ որ, այնքան թոյլ, այնքան անպաշտպան արարածներ ենք, որ չ՛գիտեմ ինչ կլինէր մեր վիճակը, դօքտոր, եթէ կողմնակի պաշտպանութիւն չ՛լինէր: (Թարթափելով արտեւանունքը): Մօտեցրէք խնդրեմ ոտքի ալդ փոքրիկ յենարանը:

ԹԱԹՈՍ: (Թաթոսը կատարում է Վարսենիկի խնդիրը): Համեցէք:

ՎԱՐՍԵՆԻԿ: Ո՛հ, ես այնքան քնքոյշ եմ, որ առանց օտարի օգնութեան ո՛չ հազնում եմ և ո՛չ հանում և ո՛չ կառքի մէջ նստում: cher docteur, գոնէ դուք վճռեցէք, այս ի՞նչ բան է որ ինձ հետ է լինում:

ԹԱԹՈՍ: Որպէս զի դօկտորը որոշ է թէ ձեզ հետ ինչ է լինում, նախ և առաջ պէտք է իմանալ թէ ձեր մէջ ի՞նչ է կատարվում... այսինքն՝ խօսելով բժշկական լեզուով, պէտք է ձեզ Կոն-րան-դերուլա: (Մարմնոյ զանազան մասերին՝ ուսին, մէջքին, թիկունքին, կրծքին զարկում է մուրճով եւ յետոյ ականջը պինդ եւ կոպտաբար դնում կրծքին): Դա, դա... դա... Վատ տակ. վռալա: (Քիչ լոռութիւնից յետոյ): Ի՞նչով էք հերակրքում. օրինակ՝ դուք միս շատ էք ուտում թէ քիչ:

ՎԱՐՍԵՆԻԿ: (Կոտրատունելով): Ես մինչեւ անգամ չ՛գիտեմ թէ ինչ բան է միսը:

ԹԱԹՈՍ: (Ծորից զարկում է մուրճով ուսազլուխը): Հը՛մ, լաւ չէ, իսկ սովի կամ բողբոջ:

ՎԱՐՍԵՆԻԿ: Հազիւ հազ, շատ քիչ, այն էլ նորա համար որպէս զի չը մեռնեմ:

ԹԱԹՈՍ: Աստուած իմ, վերջապէս սննդաբար տչինչ չէք ուտում:

ՎԱՐՍԵՆԻԿ: (Թոյլ ծայնով): Զմեռը ուտում

եմ Լօտի շփոխատ, իսկ ամառը Սակայեանի մա-
րոժնան:

ԹԱԹՈՍ: Եւ ուրիշ ոչքնչ:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Ուրիշ ոչինչ:

ԹԱԹՈՍ: Գոնէ բարիկենդանին ետզու կամ
գաթայ չէք ուտում:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Ոչ:

ԹԱԹՈՍ: Օ՛. լաւ չէ, լաւ չէ: (Կնճոտտում է
ճակատը եւ մտածում):

ՎԱՐՍԵՆՆԻԿ: (Կոտրատուելով եւ աչքերը
քնքոյշ ոլորելով): Ո՛հ, Աստուած իմ, ինչո՞ւ էք
այդպէս խիստ նայում, պարոն պրօֆէսոր, ասա-
ցէք քնչ է իմ հիւանդութիւնը:

ԹԱԹՈՍ: (Խորհրդաւոր): Իմ կարծիքով ձեր
մէջ պէտք է լինի կամ Խրիստոսի, Գիւրգիսի կամ
ուղղակի արեւմտեան:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Միթէ այդպիսի հիւանդութիւն
էլ կայ:

ԹԱԹՈՍ: Ա՛... իսկ գուք կարծում էք թէ
չկայ: Օ՛, անպայման պէտք է զրա առաջն առնել,
այլապէս ձեզ սպառնում է զարհուրելի վտանգ:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Ուրեմն, ես կարող եմ վատանալ:

ԹԱԹՈՍ: Հարկաւ, բայց ես ձեզ կտամ իրեն-
դ արեւմտեան և գուք կառողջանաք բուժարովին: Բացի
այդ...:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: (Ընդմիջելով): Բացի այդ:

ԹԱԹՈՍ: Զեր կատարեալ կազմութեան հա-
մար անհրաժեշտ է յուզել ձեր քնքոյշ կազմութեանը:
(Մօտենում է սեղանին եւ վերցնում է զանազան
գործիքներ):

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Ա՛խ, ի սէր Աստուծոյ, զգուշու-
թեամբ. ես այնքան քնքոյշ եմ, այնքան քնքոյշ
որ...:

ԹԱԹՈՍ: (Գործիքները նորից իւր տեղն է
դնում, քիչ լուրջանից յետոյ): Բայց սպասեցէք:
Ուրեմն, չէք լիշում երբ և իցէ մի զէպք, որ
առանձնապէս ազգած լինի ձեր քնքոյշ կազմութե-
ան վերայ:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Անկեղծն ասեմ:

ԹԱԹՈՍ: Պարտաւոր էք անկեղծն ասել:
Բժշկի մօտ հիւանդը պէտք է ամեն ինչ մի առ մի
խոստովանէ, որպէս առաջի Աստուծոյ:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Ա՛յ, տեսէք թէ ինչպէս էր: Ան-
ցեալ գարնան, երբ ես մասնակցում էի «Զուար-
ճասիրաց ընկերութեան» պարահանդիսին... Յիշում
էք խեղճ, լուացարար կոնանց օգտին:

ԹԱԹՈՍ: Ինչպէս չէ, լիշում եմ, յետոյ:

ՎԱՐՍԵՆՆԻԿ: Այն ժամանակ նուազում էր
զինուորական երաժշտութիւնը և գուք չէք հաւա-
տալ, cher docteur, որ այդ երաժշտութիւնը այն-

պէս ներգործեց, անպէս ներգործեց... (Թէքլում է զահաւորակի վերայ եւ նազելով): Տուէք խնդրեմ կրկին մի բաժակ ջուր: Աստուած իմ, որքան քնքոյշ եմ:

ԹԱԹՈՍ: (Սիֆոնից լցնելով կրկին մի բաժակ ջուր): Ինչո՞ւ դուք ինձ այդ բոլորը առաջուց չ'առացիք. ես այժմ շատ լաւ եմ հասկանում թէ ձեզ ինչ է հարկաւ:

ՎԱՐՍԵՆԻԿ: Ասացէք:

ԹԱԹՈՍ: (Ժխելով եւ մտածելով զրոյս է սուտ դեղատոմս եւ տալիս է Վարսենիկին): Աճեցէք այս լաբլաբոները, թֆո՛ւ, ինչ եմ ասում... այս հաբերը ջրի մէջ և քնելուց առաջ սորա ջուրը կ'սմէք կաթիլ կաթիլ. լետոյ տաքացրած արջի եղբսեցէք կրծքին. իսկ ամենագլխաւորը պէտք է մէկի հետ պարէք, ում հետ էլ ցանկանում էք, բայց անպատճառ պէտք է պարել: Ա՛յ, եթէ կամենաք, փորձեցէք ինձ հետ: Յանկանո՞ւմ էք հէնց պոչիկա: ((Որպէս կազմալէր կանգնում է առջեւ եւ առաջարկում է իւր ձեռքը):

ՎԱՐՍԵՆԻԿ: Զեզ հետ:

ԹԱԹՈՍ: Այո, ինձ հետ: (Սիրահարական հայեացք է ձգում Վարսենիկի վրայ):

ՎԱՐՍԵՆԻԿ: Ա՛յժմ:

ԹԱԹՈՍ: Անպատճառ, որովհետեւ բժշկութիւնը երբէք չ'պէտք է լետածգել:

ՎԱՐՍԵՆԻԿ: (Քնքոյշ): Համեցէք: (Պարում են կարմ միջոց. Թաթոսը նրզում է պօրիա պարի նղանակը):

ԹԱԹՈՍ: Առաջին անգամ այսքան ևս բաւական է, ուրիշ ոչինչ. ազատ էք, գնացէք և մի վախեցէք:

ՎԱՐՍԵՆԻԿ: Մերսի: (Հանում է քսակից մի տապանոց եւ նրկու մատի ծայրով ըննած քնքաբար տալիկ է, նոյն ձևով Թաթոսը ընդունում է):

ԹԱԹՈՍ: Յուսով եմ որ այժմ ձեզ լաւ էք զգում:

ՎԱՐՍԵՆԻԿ: Շնորհակալ եմ, միլ բեմերսիման: (Պատրաստում է գնալ):

ԹԱԹՈՍ: (Գլուխ տալով եւ առաջնորդելով դէպի դուռը): Խնդրեմ: (Բաց է անում միջին դուռը, Վարսենիկը ընկերանս է անում եւ դուրս գնում):

ՎԱՐՍԵՆԻԿ: (Դրսից): Օ, բրվուար:

ԹԱԹՈՍ: (Յետևից): Օ, բրվուար: Աշխատեցէք, քնքոյշիկ օրիորդ, գիշերները չ'քրտնէք, չ'մոռանաք արջի իւղ քսել ձեր կրծքին: (Կողմ): Տասը ուրբի՛... վատ չէ: (Դէպի դարչիծը): Հետեւալը:

ՏԵՍԻՒ 9

ԹԱԹՈՍ, ՄԱԳԴԱՆ (Խոհանոցից վերադառնալով)
 և և. ՍԱՅԹԱՔԵԱՆ:

ՄԱԳԴԱՆ: (Դէպի խոհանոց տանող դռներու)
 Ե՛յ, լերբ, այդ բնէր էիր անում օրերդդ
 հետ.

ԹԱԹՈՍ: Լուր, լիմար. չես տեսնում կար-
 միր վարդը: (Յոյց է տալիս տաս ուրլիանոցը):

ՄԱԳԴԱՆ: Տես, անպիտան, զգո՛ւշ, տղա թէ
 ոչ այդ անամօթ աչքերդ կ'հանեմ տակից:

ՏԵՍԻՒ 10

ՆՈՅՆԻ և ՍԱՅԹԱՔԵԱՆ

(Միջին դռներում երեսում է և. Սայթաքեանը):

ԹԱԹՈՍ: Լաւ է լաւ, կորիւր, միթէ չես
 տեսնում որ հիւանդ կայ տանը: (Մագդանը դուրս
 է գնում, Թաթոսը սպանալի հայտնացք է րոնում
 և սկսում է սննեակի ամբողջ երկարութեամբ
 յետ ու առաջ մանգալ):

ՍԱՅԹԱՔ. Ուհ, Տէր իմ Աստուած, Տէր իմ
 Աստուած, բնչալէս խիտ ես, սիրելիս, մինչև ան-
 դամ երկիւղալի է քեզ հետ գործ ունենալ:

ԹԱԹՈՍ: Նստեցէք խնդրեմ, ազախնիս էի
 յանդիմանում:

ՍԱՅԹԱՔ. Ինչ նստեմ. նախ և առաջ դու
 քնձ ուղիղն ասա, հօ չես կարատիլ:

ԹԱԹՈՍ: Ինչ էք տուում, միթէ ես դառա-
 եմ կամ աւաղակ: Ասացէք բնչ է իսկապէս ձեր
 տկարութիւնը:

ՍԱՅԹԱՔ. Մըջիւնները, դօքտոր, մըջիւն-
 ները հոգիս հանում են. երկրորդ գիշեր է հան-
 դրստութիւն չունիմ նրանց ձեռքից:

ԹԱԹՈՍ: Ո՛րտեղ են մըջիւնները:

ՍԱՅԹԱՔ. Միթէ յայտնի չէ—մէջքիս: Բացի
 դրանից գլխի ծանրութիւն ունիմ և ձախ ձեռքիս
 մատը կարծես դողում է: Օգնիր, հոգիս, շատ եմ
 խնդրում:

ԹԱԹՈՍ: Նախ՝ բնչալէս է ձեր անունը:

ՍԱՅԹԱՔ. Սոֆի:

ԹԱԹՈՍ: Այո, երևում է որ Սոֆիայ պիտի
 լինիք: Երկրորդ՝ շատ ժամանակ է որ այդպէս էք:

ՍԱՅԹԱՔ. Ասացի որ երեկ գիշերուանից...
 Մարեա Կարոպետովնայի հետ թէյ խմեցինք և
 պառկեցինք. ինկ թէ ո՛րքան քնեցի, սիրելիս, չեմ
 լիշում ճշմարիտ:

ԹԱԹՈՍ: Հը՛մ...

ՍԱՅԹԱՔ. Չեմ լիշում, քո արևը, և յանկարծ
 ի՛նչ եմ տեսնում — ննջարանումս — երկու անպիտան
 մաջլաջուն, որոնցից մէկը սկսեց ինձ խեղդել ասե-

լով. «Ա՛, դու քո մարդուն էիր ուզում հա՛, ահա քեզ մարդ»։ Նստեց մէջքիս և սկսեց հասցնել մէկ թէ երկու, մէկ թէ երկու։

ԹԱԹՈՍ։ Այ, այ, այ, և դուք չէք յիշում այդ մաշլաջունի, այսինքն «խմբիկի» երեսը։

ՍԱՅԹԱԶ։ Իսկ և իսկ իմ դաժան մարդու պատկերն ունէր. մինչև անգամ ճակատի ուռույցքն էլ ունէր։ Տեսել ես, սիրելիս, իմ մարդու ճակատի պողբ։

ԹԱԹՈՍ։ Օ, ինչպէս չէ, յետոյ, յետոյ։

ՍԱՅԹԱԶ։ (Շարունակելով)։ Ես սկսում եմ բզաւել. «Մարեա Կարապետովնա, Մարեա Կարապետովնա»։ Իհ, որտեղ է Մարեան՝ ուշադնաց է եղել։

ԹԱԹՈՍ։ Իսկ մաշլաջունը ինչ էր անում։

ՍԱՅԹԱԶ։ (Աչքերին նայելով)։ Այդպէս մինչև առաւօտ խեղդում էր ինձ, մինչև որ հագիւ զարթեցի։ Տէր Աստուած, դու պէտք է տեսել էիր թէ ինչպէս ձեռքս ու ոտքս դողում էին. գլուխս կատարեալ լիմարի պէս, իսկ մէջքիս որքան մըրջիւններ... Աստուած իմ, որքան մըջիւններ... Ա՛յ, հիմայ էլ, տեսէք։ (Մէջքը քորում է, թաթոսը նմանապէս քորում է)։

ԹԱԹՈՍ։ Հը՛մ, այդ շատ երկիւղալի է։ (Գլուխը թափահարելով)։ Դուք բացի թէյից ուրիշ

խմիչք չէք խմել Մարեա Կարապետովնաի հետ. օրինակ՝ թէյի հետ ում չ'խառնեցի՞ք կամ գոլինազ չ'կերաք։

ՍԱՅԹԱԶ։ Ի՛նչու հոգուս մեղք անեմ. ում էլ կար... Բայց այդ ի՞նչպէս իմացար. դու կախարդ ես, ինչ է։

ԹԱԹՈՍ։ Եւ երևի մաշլաջունի համար բան չ'թողեցի՞ք մնայ։ Օ՛, ուրեմն զարմանալի չէ, թէ ինչու է ձեզ խեղդելիս եղել։ ԹՖ՛ու, դեռ չ'գիտէք թէ վերջը ինչեր է լինելու։

ՍԱՅԹԱԶ։ Ի սէր Աստուծոյ, մի՛ վախեցրու, սիրելի դօքտոր... աղանջում եմ, մի՛ վախեցրու։

ԹԱԹՈՍ։ Տեսէք թէ բանն ինչումն է։ Ժամանակակից բժշկութեան մէջ իսկապէս որոշվում են երեք տեսակ գիտութիւն՝ Սիմպարիս, Գիգրոպարիս և Հոմոպարիս. բոլորը կախուած է նորանից թէ որով սկսել։

ՍԱՅԹԱԶ։ Իսկ ո՞րն է աւելի արժանը։

ԹԱԹՈՍ։ Ամենից արժանը սիմպատեան է. բայց ձեր կազմուածքին նայելով՝ առանց զիդրոտ-րապիայի դժուար թէ գլուխ դայ բժշկութիւնը։ Բացի դորանից ես չգիտեմ թէ դուք ինչպէս էք ուզում լաւանալ, շո՛ւտ թէ դանդաղ։ Եթէ դանդաղ էք ուզում առողջանալ, այն ժամանակ շատ տը-

ժան կը նստի և պէտք է ամբողջ մի տարի, ամեն օր վիզիտներ անէք ինչ:

ՍԱՅԹԱՔ: Աստուած մի ասացէ, այդ քնչ ես ասուծ:

ԹԱԹՈՍ: Բայց ես կարող եմ մի րոպէսուն էլ քժշկել, միայն մի փոքր թանկ կ'նստի:

ՍԱՅԹԱՔ: Շատ բարի, ինչ արած, լաւացրու միայն թէ չքարչարես և ինդրեմ չը կտրատես:

ԹԱԹՈՍ: Աղնիւ խօսք: չեմ կտրատել... օ, որքան կասկածոտն էք: Դէ՛հ, փակեցէք աչքերը և լանկարծ վերկացէք: (Սայթաքեանը կատարում է թաթոսի պատուէրը): Այժմ պինդ ձայնով ասացէք՝ «մէկ թէ երկու, մէկ թէ երկու»:

ՍԱՅԹԱՔ: (Դողդողալով եւ իւրաքանչիւր քսոհց յետոյ ծանր շունչ քաշելով): Մէկ... թէ... երկու, մէկ... թէ... երկու:

ԹԱԹՈՍ: (Վերջին խօսքերին ըոռնցքով պինդ զարկում է մէջքին, Սայթաքեանը ընկնում է քազկաթոռի վերայ): Մէկ թէ երկու:

ՍԱՅԹԱՔ: Օ՛հ, մէջքս, մէջքս:

ԹԱԹՈՍ: (Նրեանին սիֆոն է ածում): Վնաս չկայ, կանցնի: Ե՛հ, այժմ քնչպէս էք զգում:

ՍԱՅԹԱՔ: (Աչքերը քանալով): Ոչինչ, կարծես մի փոքր լաւ եմ:

ԹԱԹՈՍ: Ել ձեռքերդ չեն դողում:

ՍԱՅԹԱՔ: Ոչ:

ԹԱԹՈՍ: Մըջիւնները փախան:

ՍԱՅԹԱՔ: Այո, փախան... բայց ինչ որ մի բան կրկին թիկունքիս մէջ կծում է:

ԹԱԹՈՍ: (Բարկացած): Ե՛հ, օրհնուած հոգի, քնչու առաջուց չասացիք, ես ձեզ խմացնելու բան կ'տայի, քնչ տեսակ կին էք եղել: (Ինքն իրան): Արդեօք քնչ տամ, ամբողջ սոգտն քնքոյշիկ օգիսդը խմեց, օղին անյարմար է. իսկ լաբ-լաբուն ափոսս է, պէտք կը գայ, այդ Մադգանի դեղն է: (Պարարանի վերայ տեսնում է մի գունատը հեղուկ, սկսում է շարժել): Արդեօք քնչ կայ սորա մէջ, է՛հ, ինչ ուզում է լինի, մի կաթիլը քնչ կարող է վնասել: (Սայթաքեանին): Ահա, խմեցէք, երկու կաթիլ բաւական է: (Շփում է սաստիկ զգուանքով):

ՍԱՅԹԱՔ: Մի փոքր աղի էր, բայց փոյթ չէ:

ԹԱԹՈՍ: Համը նշտնակութիւն չունի, դուք քնչպէս էք զգում ձեզ:

ՍԱՅԹԱՔ: Փառք Աստուծոյ: Օխայ կարծես թէ բալզամ լինէր, զարմանալի է, ներսս տաքացաւ: Օ՛հ, որքան շնորհակալ եմ, սիրելիս, որքան, չ'գիտեմ ինչպէս փոխարինեմ արած լաւութիւնդ:

ԹԱԹՈՍ: Ի՞նչպէս... միթէ չ'գիտէք: (Չեղքերը մնկնելով՝ փող ուզելու նշան է անում):

ՍԱՅԹԱՔ: (Բեռնիկիւրը քանալով եւ ծիծաղելով նրեսին): Կարմիրը բաւական չէ:

ԹԱԹՈՍ: Զեր կամքն է, բայց եթէ կապուտն էլ աւելացնէք, վատ չի լինիլ: Դուք մոռանում էք որ բոցի սիմպատիայից, ես ձեզ բժշկեցի, (շեշտելով) հիգ...րո...տրապիայով: (Յոյց է տալիս սիֆոնի վերայ):

ՍԱՅԹԱՔ: Եթէ այդպէս է վեր առ, հոգիս: (Տալիս է հինգ ոտըլի): Իսկ դու ամուսնացած ես:

ԹԱԹՈՍ: (Հառաչելով): Ե՛հ, ցաւակցաբար ամուսնացած եմ:

ՍԱՅԹԱՔ: (Նոյնպէս): Ե՛հ, ինչ արած, հոգիս, սիրիւ կնոջդ քանի որ ամուսնացած ես: Օ՛, ճրքան բարեք արած կլինէիր՝ եթէ... (Գնում է դէպի դուռը եւ յանկարծ պոռալով): Օյ, օյ, օյ, այս ի՞նչ է, օյ, օյ, օյ...

ԹԱԹՈՍ: Ի՞նչ է ի՞նչ, ի՞նչ պատահեց:

ՍԱՅԹԱՔ: Սիրտս, սիրտս կտրատեց... օյ, օյ, օյ... մարդասպան... ասո՛ւ շուտ ալդ ի՞նչ խմացրիր... վայ, վայ, վայ, օգնեցէք, օգնեցէք, վայ, վայ, վայ:

ԹԱԹՈՍ: (Շփոթուած): Կանցնի, կանցնի, մի վախէք, այդպէս էլ հարկաւոր էր, նոյն իսկ գիտութեան համար հարկաւոր էր:

ՍԱՅԹԱՔ: Թ՛քել եմ գիտութեանդ վերայ, երբ պէտք է ոտներս ձգեմ... վայ, վայ, վայ... լսում

ես, շուտ օգնիր թէ չէ այնպէս կ'պուամ, որ բոլոր հիւանդներդ փախչեն... վայ, վայ, վայ... ճոճ սիրտս, սիրտս:

ԹԱԹՈՍ: (Կորցնելով իրան): Վա՛հ, ինչ տեսակ կին էք, որքան կասկածոտ: Տեսէք, այնքան «օյ, օյ, օյ, և վայ, վայ» արիք, որ իմ փորս էլ ցուեց: (Ինքն իրան): Մեատնի կոնֆէտը գուցէ հանգստացնի, հը՞... (Աջ զրպանից հաննելով): Այս բոպէիս, այս բոպէիս բժշկեմ... ահա, ահա բնդունեցէք այս հաբը, ամենաընտիր հաբ: Փակեցէք աչքերը և կուլ տուէք յանկարծ:

ՍԱՅԹԱՔ: (Փակելով): Բայց վախում եմ, դօքտոր, որ նորից...

ԹԱԹՈՍ: Ե՛հ, կերէք, մի վախենաք, այս երրորդ գիտութիւնն է, ամենաանվնաս՝ զօմէօպատիա: (Բարկացած): Դէհ, կուլ տուէք էլի: (Սայթաքեանը կուլէ տալիս. լռութիւն): Ե՛, ի՞նչպէս է այժմ ձեր սիրտը, անկարելի է որ լաւ չ'զգասք:

ՍԱՅԹԱՔ: Օխայ, շնորհակալ եմ, ինչպէս մօրից նոր ծնուած: Ե՛հ, ներողութիւն հոգիս, զուր տեղը վիրաւորեցի: (Ծիծաղելով): Այժմ տեսնում եմ որ հրաշքներ ես գործում: (Լռութիւն): Դու, սիրելիս, սովորութիւն չունիս անձամբ այցելելու հիւանդներին:

ԹԱԹՈՍ: Համակրելի անձանց մօտ—ինչու չէ:
(Խորհրդատու չայեացք է ձգում):

ՍԱՅԹԱՔ: (Տալով այցեւորում): Հասցէս՝ Սոֆիա
Սայթաքեանց, լայտնի վաճառականի կին, ամէնքը
ճանաչում են, Միքայէլեան փողոցում:

ԹԱԹՈՍ: Անպատճառ, անպատճառ կ'մտնեմ:
(Եռանդով առաջնորդում է մինչեւ դուռը):

ՍԱՅԹԱՔ: Յ'տեսութիւն, ազնիւ բարեկամ:

ԹԱԹՈՍ: Յ'տեսութիւն, ողորմած տիկին: (Յե-
տեւից): Գիշերները կէս կէս ֆունտ տաքացրած
խաւիժ կ'պցրէք ձեր կրծքի աջ և ձախ կողմը:
Տաք պտուկեցէք, չ'մըսէք: Առաւօտները Կէօլա-
չ'ժանգաք:

ՍԱՅԹԱՔ: (Դրսից): Շատ բարի, շատ բարի,
շնորհակալ եմ:

ՏԵՍԻԼ 11

ԹԱԹՈՍ (միայնակ)

ԹԱԹՈՍ: Սառանան տանէ, այն քնչ խմուց-
րի, հը՞: (Հոտ է քաշում շիշը եւ զգուանքով): Հը՛մ...
թֆու թֆու... իրաւ որ... (Արագ դուրս է թա-
փում պատուհանից): Օ՛, ինչ զգուելի հոտ ունէր...
բայց արի՛ տես որ լաբլաբուն լաւացրեց: (Ձեռքերը
կոխում է նախ աջ, յետոյ ձախ զրպանները
զարմացած): Վահ, այս քնչ է, չէ որ լաբլաբու-

ները ձախ զրպանումս էր. ուրեմն ես նրան քնչ
տուի հաբի տեղ... (Յիշելով): Տէր իմ Աստուած,
այլ քեզ խայտառակութիւն... շապկիս կոճակն եմ
տուել, հա՛, հա՛, հա՛, այլ թէ քնչ է նշանակում
հաւատ ունենալ դէպի բժիշկը: Օ՛, աչքերդ բաց արա՛,
գօքտոր Թաթոս, զգո՛ւշ, որ այս անգամ լաւ պրծար:

ՏԵՍԻԼ 12

ԹԱԹՈՍ եւ ԴՈՒԴՈՒԿԱԾԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ

ԵՐՈՒԱՆԴ: (Արագութեամբ ներս է մտնում,
մի առ մի ընդոր առարկաները դիտում, յանկարծ
կանգնում է եւ ծիծաղում, յետոյ ցուցամատով
խփում է Թաթոսի քնիժին. վերջինը սոսկում է):
Քանի տարի, քանի տարի:

ԹԱԹՈՍ: (Դողալով): Ո՞ւմմմ... պապատիւ
ունիմ...

ԵՐՈՒԱՆԴ: (Սպառնալով): Սուս, քո գործը
չէ... ամէնքի հետ. նստի՛ր, նստի՛ր շուտ: (Բռնի
նստեցնում է. ընկնում է քիժի ծայրից եւ բարձ-
րացնում վեր: Ստիպում է այդ դրութեան մէջ
երկար նստել):

ԹԱԹՈՍ: Բբբայց դուք... ձձձեր հերթին չը
սասպատեցիք:

ԵՐՈՒԱՆԴ: (Նկատելով ափսէի վերայ սե-
ւեղեղա, խփում է գլխին): Լութր, իորթ Կի Բասթո:

(ծոցից հանում է յիշատակարանն եւ երեսին նա-
յելով, անդադար քմծիծաղ գրում է մի քան):
Անթուր դատաւորան... սպանգարապետ բժշկական...
անսուր մտաւոր, կենաց ծառ... պինդ և լաւիտեան:
(Դրսից լսվում է զանգի ձայն. երուանդը պոռում է):
Մի խփիր զանգը, ջղերս գրգռոււմ են. տես, կը
խեղդեմ, սրիկայ:

ԹԱԹՈՍ: (Նոյն դիւրքի մէջ, երկիւղով): Աս-
տուած վկայ, ես չէի:

ԵՐՈՒԱՆԻ: Լուր: (Վեր է թռչում տեղից,
յանկարծ մօտենում է, կզակն է քարծրացնում եւ
ուղիղ աչքերին նայելով՝ շատ մօտից երգելով):
Ասա, քանի տարի, քանի տարի. մէկ թէ երկու...
տրալա լա, լա, լա, մէկ թէ երկու:

ԹԱԹՈՍ: Բբբայց...

ԵՐՈՒԱՆԻ: (Օձիքից քաշելով թափահա-
րում է) Մէկ թէ երկու...

ԹԱԹՈՍ: (Երկիւղով): Բայց պարոն, խնդրեմ
հանեցէք ձեր լեզուս:

ԵՐՈՒԱՆԻ: (Սոսկալի քերան քանալով, հա-
նում է ամբողջ լեզուն): Ըհը...

ԹԱԹՈՍ: (Ձգուշութեամբ վեր է կենում, մօ-
տակայ սեղանից վերցնում է քիչ աղ եւ լեզուի
վրայ ցանելով, երկար նայում են իրար): Կապ-
րէք — կէս տարի:

ԵՐՈՒԱՆԻ: Շնորհակալ եմ, ց'տեսութիւն:
(Աստակում է, յետոյ քոշոր առարկաներին ողջու-
նում է եւ վերջը թաթոսի վերայ թքելով), Հը՛հ,
կէս տարի, կէս տարի: (Արագ դուրս է գնում եւ
ճանապարհին բաղխում է Արշինեանի հետ. վեր-
ջինը գլորվում է յատակի վերայ):

ՏԵՍԻԼ 13

ԹԱԹՈՍ, ԱՐՇԻՆԵԱՆ

ԹԱԹՈՍ: Անքաղաքավարի, բաւական չէ որ
ապտակեց, թքեց երեսիս, լրբութեանը նայիր, դեռ
փողս էլ չ'տուեց, խեղաքար: Սլո, Աստուած վկայ,
խեղաքար էր:

ԱՐՇԻՆԵԱՆ: (Դժուարութեամբ վերկենալով
տեղից): Հայփան, հերիք չէ որ հերթին չ'սպա-
սեց, դեռ ինչպէս բօթեց էլ:

ԹԱԹՈՍ: (Օգնում է շորերը թափտալուն):
Ի սէր Աստուծոյ, ներեցէք ինձ, խնդրում եմ հա-
մեցէք ալատեղ, բազկաթուի վերայ... (Նստեց-
նում է): Ի՞նչով կ'ոնող եմ օգտակար գտանել...
դուք մի այնպիսի երիտասարդ տեսք ունիք. այն-
պիսի փառահեղ կազմուածք, վերջապէս այնպիսի
աչքի ընկնող չազութիւն, որ ճշմարիտ միմիայն
կարող եմ հիանալ ձեզ վերայ: (Կողմ): Սատանան
տանէ. հիմալ տես որ սա էլ խեղաքար լինի:

(Գլուխը քորելով): Ի՞նչ վատ խփեց անիծածը, փոքր մնաց խեղդէր...

ԱՐՇԻՆ: Ե՛հ, թողէք խնդրեմ, պարոն դօքտոր, ձեր հիացմունքը. փայծաղս փճացել է, իսկ դուք ինչեր էք ասում:

ԹԱԹՈՍ: Ա՛խ, ի՞նչ անախորժ խօսք ասացիք՝ «փայծաղ»:

ԱՐՇԻՆ: Ի հարկէ անախորժ. բաւական է ինձ թոյլ տամ մի փոքր աւելորդ խմել կամ լիմարութիւն անել, խեղոյն փայծաղս սկսում է դողդողալ:

ԹԱԹՈՍ: Իսկապէս ձեր փայծաղը սրտեղ է գտնվում:

ԱՐՇԻՆ: Ես կարծում եմ որ աջ կողմը:

ԹԱԹՈՍ: Հը՛մ, նշանակում է որ ձեր աջ կողմն է ցաւում:

ԱՐՇԻՆ: Ի հարկէ, քանի որ աջ կողմն է:

ԹԱԹՈՍ: Խնդրեմ մի՛ զարմանաք: Որպէս զի բժշկականութիւնը չսխալուի, շատ կարեւոր է որ ինքը հիւանդը գլխի ընկնի թէ ինչ բան որտեղիցն է ցաւում: (Դուռը թակում են): Ո՛վ է: (Մտնում է Մազաւանը, տալիս է մի տոմսակ եւ անմիջապէս դուրս գնում. Թաթոսը կարդում է կիսածայն, քայց սլարգ): «Թաթոս ջան, մի վատ դեղ գրիր այդ մարդու համար. երբ ես այդ հաստ

դերձակին տալմա էի կարել տալիս, անպիտանը փորձի ժամանակ ինձ անգաղար կսմտում էր»:
(Բարկացած): Ա՛, դու խալտառակ, կովի դունչ... տես, տես այս հաստափորին, դեռ կսմտում էլ է... սպասիր, հայվան, խելագարի վրէժը քեզանից հանեմ: Ես քեզ ցոյց կ'տամ թէ ինչպէս են տալմա կարում: (Բարկացած ման է գալիս):

ԱՐՇԻՆ: Ի՞նչ է, ի՞նչ պատահեց:

ԹԱԹՈՍ: Աստուած ո՛չ գիտէ լիմարի գլուխը: Հեռագիր է, հեռագիր, հասկանում ես: Աշխանահի Տալմայեանցը յանկարծ հիւանդացել է և խնդրում է անմիջապէս այցել եմ:

ԱՐՇԻՆ: Նշանակում է դուք շտապում էք և չէք կարող ինձ նայել:

ԹԱԹՈՍ: Ա՛յն: (Կոշտ): Կանգգեցէք մի սաքի վերայ:

ԱՐՇԻՆ: Ի՞նչպէս:

ԹԱԹՈՍ: Այսպէս: (Ցոյց է տալիս): Մի՛թէ չ'գիտես պարուհիք ինչպէս են անում:

ԱՐՇԻՆ: Ներեցէք, դօքտոր, ես դժուարանում եմ:

ԹԱԹՈՍ: (Ժխելով): Ա՛, դժուարանում էք, բայց այդ շատ երկիւղս ի է և կարող էք միտեղամայն...

ԱՐՇԻՆ: Ի՞նչ, վտանգ է սպառնում:

ԹԱԹՈՍ: Աստուած ոչ գիտէ, ի հարկէ որ...

ԱՐՇԻՆ: Մի դեղ, մի ճար արէք, աղա-
չում եմ...

ԹԱԹՈՍ: Այգ հիւանդութիւնը ճար չունի.
միմիայն մի միջոց կայ՝ վերջին գիտութիւն... կ'օգ-
նի՝ լաւ, չի օգնի— ջհանդամը:

ԱՐՇԻՆ: Ասացէք, ասացէք, աղաչում եմ:

ԹԱԹՈՍ: Ամէն օր երկու բաժին սապնաջրով
եփած խաշ կերէք:

ԱՐՇԻՆ: Ոչ, ոչ, խղճացէք. այ. բժիշկ, խնայե-
ցէք ինձ թշուառիս: Երբեմն այն աստիճան սաս-
տիկ է լինում ցաւս, որ ինչպէս եղ բառաչում եմ
և մինչև անգամ գետնին գլոր գլոր եմ գալիս:
Խնդրում եմ, աղաչում, սովորեցրէք հեշտ միջոց,
պարոն պրօֆեսսոր, իմ յօշոր ձեզ վերայ է:

ԹԱԹՈՍ: (Դիտելով): Գլորուեցէք տեսնեմ, շատ
հետաքրքիր է:

ԱՐՇԻՆ: Բայ ինչ կայ այստեղ հետաքրքիր:

ԹԱԹՈՍ: Գլորուեցէք, ձեզ ասում եմ. այդ
իմ պահանջը չէ, գիտութիւնն է այդպէս պահան-
ջում, հասկանում էք, գիտութիւնը. թէ չէ թքած
քեզ վերայ, ինձ համար միևնոյն է, կոմենում էք
մեռէք, ինձ ինչ: (Նստում է և ոտքը ոտքի վե-
րայ դնելով՝ սուլում է):

ԱՐՇԻՆ: Բայ, պարոն դօքտոր...

ԹԱԹՈՍ: Զէք ուզում գլորուել, որ ես տես-
նեմ թէ բանն ինչու՞ն է:

ԱՐՇԻՆ: Է՛հ, ինչ արած, քանի որ կա-
րուոր է գիտութեան համար... — համեցէք... (Յետ
հանելով սիրթիւկը): Տեսէք, պարոն դօքտոր,
առաջ առաջ այս տեղս է բռնում և ծակծկում...

ԹԱԹՈՍ: Հա՛, լետոյ:

ԱՐՇԻՆ: Յետոյ այստեղս է թռթռում:

ԹԱԹՈՍ: Վերջը, վերջը...

ԱՐՇԻՆ: Վերջը միանգամից թէ այստեղս և թէ
ամէն տեղ, և ես սկսում եմ ահամայ այսպէս...
(Սկսում է գլորուել և շորքոտանու նման շրջել և
ծովոտել): Եղան պէս զոռալ... ըմբ՝ մըմբ՝ մըմբ...
(Թաթոսը երգում է ժամանակակից մի ընդհան-
րացած ռամկական երգ, որ ծիծաղ յարուցանէ
յետոյ սուլում է և փողերը համարում):

ՏԵՍԻԼ 14

ՆՈՅՆԻ և ԹԵՌԴՈՐՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԱՄՈՒՐԵԱՆ: (Կարճ լուծիմնից յետոյ մօ-
տենում է Թաթոսին և բռնելով նորա ախանջից):
Այդ ինչեր ես անում այստեղ, խարդախ անպիտան:
(Թաթոս զարհուրած բժշկի ծայնից՝ ծնկները
ծալծալվում են):

ԹԱԹՈՍ: Ոչինչ... ոչինչ. պարոն դօքտոր:

ՄԱՄՈՒՐԵԱՆ: Դեւրս իսկոյն այս տանից:


ԱՐՇԻՆ: Ի՞նչպէս, դուք...

ՄԱՄՈՒՐ: Այո, նոյն ինքն բժիշկ Մամու-
րեան: Իսկ դու, գրպանահատ, ժուլիկ խաբէրայ,
իսկոյն ունեցած բարդդ հաւաքիր և դեւրս իմ տա-
նից: (Դէպի դռները): Մագդան, լալտները ամեն-
քին որ այսօր հիւանդներին չեմ ընդունում:

ԹԱԹՈՍ: (Որ քարացած կանգնած է): Ըհ,
Թաթոս, քո բաղդ գրողին բնչ ասեմ:—(Դուրսը
քորելով դուրս է գնում):

ՄԱՄՈՒՐ: (Յեռնակից): Մի ժամից կ'ստանաք
ձեր վարձը, (Հեգնական ծիծաղով): Հա, հա, հա-
մեծապատիւ գօկտոր Թաթոս, սրիկայ:

Վ. Ա. ՐԱԳՈՅՐ



ՀՀ Ազգային գրադարան



NL0153146

